

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

26 հունվարի 2009 թ.

թիվ 1

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87 հոդվածի 2-րդ մասի պահանջները և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ա» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն պաշտոնապես **պարզաբանում է.**

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի համաձայն ապրանքներ են համարվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող բոլոր տեսակի առարկաներն ու իրերը, այլ գույքը, այդ թվում՝ արժույթը, արժույթային արժեքները, էլեկտրական, ջերմային և այլ տեսակի էներգիան, փոխադրամիջոցները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «բ» կետով սահմանված տրանսպորտային միջոցների:

Ելնելով վերը շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող փաստաթղթերը (լիցենզիաներ, օգտագործման իրավունքներ, թույլտվություններ, հաշիվ-ապրանքագրեր և այլն) ապրանքներ չեն համարվում և ենթակա չեն մաքսային ձևակերպումների:

Նախագահ՝

Գ. Խաչատրյան